

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից 2014 թվականի առաջին եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքների մասին

Ամփոփվել են ՀՀ մարզերում տեսչական ստուգումների անցկացման ժամանակացույցի համաձայն 2013թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին Արարատի մարզում իրականացված ստուգումների արդյունքները:

Ստուգումների արդյունքում արձանագրված խախտումների համար կայացվել է տեսչության պետի որոշումը՝ Արարատի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին, հողային պետական տեսչության պետին կարգապահական տույժի, իսկ Արտաշատ, Մասիս և Այնթապ համայնքների ղեկավարներին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

Մարզում արձանագրված որոշ խախտումներին իրավական գնահատական տալու նպատակով նյութերն ուղարկվել են Արարատի մարզային դատախազություն:

2013թ. ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Երևանի տարածքային ստորաբաժանումում կադաստրային հերթապահ քարտեզների վարման նկատմամբ իրականացված ստուգումների արդյունքներն ամփոփվել և ներկայացվել են կոմիտեի նախագահին:

Հաստատված ժամանակացույցի համաձայն՝ սույն թվականի փետրվարի 24-25-ը տեսչության կողմից ստուգումներ են իրականացվել Երևանի քաղաքապետարանի համակարգում գտնվող <<Քաղաքաշինություն>> ՓԲԸ-ում առկա քարտեզագրագեոդեզիական նյութերի ու տվյալների հաշվառման, պահպանման, օգտագործման և տրամադրման նկատմամբ, որի արդյունքում կազմված տեղեկանքը ներկայացվել է կոմիտեի նախագահին և Երևանի քաղաքապետին:

Տեսչությունը կազմել է հողօգտագործման բնագավառում գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից իրականացվող ստուգումների հարցաշարերը, որոնք ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարության քննարկմանը:

Իրականացված ստուգումների արդյունքում նշանակված վարչական տույժերից սույն թվականի 1-ին եռամսյակի ընթացքում պետական բյուջե է մուտքագրվել 950000 դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում տեսչությունը կատարել է 2014թ. ապրիլ ամսից իրականացվելիք տեսչական ստուգումների նախապատրաստական աշխատանքներ: